ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 օգոստոսի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

108
(3139)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

9. 887 ՄԱՐԴ ՍՏԱՑԵԼ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ 486 ՄԼՆ ԴՐԱՄ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մի քանի աղբյուրից հաշվարկված եւ փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները ֆիզիկական անձանց կարող են վերադառնալ ինքնաշխատ եղանակով:

Այսինքն, եթե ձեր հաշվին նկատեք ավելցուկ՝ կլորիկ գումարի տեսքով, կարող եք չանհանգստանալ, դա ձեր աշխատավարձից կուտակված սոցվճարի վերադարձն է: Հենց այս վերադարձի շնորհիվ անձը մեկ օրում կարող է դառնալ միլիոնատեր:

Եկեք հասկանանք՝ ինչպես է գործում սոցվճարի վերադարձը: Եթե ֆիզիկական անձի ամսական եկամուտը չի գերազանցում 500 հազար դրամը, ապա սոցիալական վճարը հաշվարկվում է եկամտի 5%-ի չափով, իսկ գերազանցելու դեպքում՝ եկամտի 10%-ի եւ 25 հազար դրամի տարբերության չափով, բայց ոչ ավելի՝ 87 հազար 500 դրամից:

Եթե տարեկան եկամուտը չի գերազանցում 6 մլն դրամը, ապա սոցիալական վճարը հաշվարկվում է եկամտի 5%-ի չափով, իսկ գերազանցելու դեպքում՝ եկամտի 10%-ի եւ 300 հազար դրամի տարբերության չափով, բայց ոչ ավելի՝ 1 մլն 50 հազար դրամից:

Հարկ է ընդգծել, որ սոցիալական վճարների վերադարձից կարող են օգտվել այն ֆիզիկական անձինք, որոնք մի քանի գործատուների մոտ աշխատում են որպես վարձու աշխատող, կամ միաժամանակ հանդիսանում են անհատ ձեռնարկատեր կամ նոտարի վարձու աշխատող, որի արդյունքում նրանց համար հաշվարկված եւ փոխանցված սոցիալական վճարի ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված առավելագույն չափը:

«Ժողովուրդ» օրաթերթը հարցմամբ դիմել էր ՀՀ Պետական եկամուտների կոմիտե՝ հասկանալու համար, թե որքան է կազմել այս ծրագրով վերադարձի գումարի չափը, եւ քանի անձ է ստացել սոցվճարի վերադարձ:

«ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ 2025 թվականի առաջին եռամսյակում մի քանի աղբյուրից ստացման ենթակա (ստացված) եկամտից հաշվարկված եւ փոխանցված (գանձված)՝ սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարներ վերադարձվել են թվով 9 887 մասնակիցներդի, իսկ վերադարձված գումարի ընդհանուր չափը կազմել է 486 մլն 606 հազար դրամ», - ասված է հարցմանն ի պատասխան:

Շրջակա միջավայրի նախկին նախարար Հակոբ Սիմիդյանի կադրերը մեկը մյուսի հետեւից ազատվում են պաշտոններից: Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը տարբեր հիմնադրամներում աշխատելուց հետո՝ 2018 թվականից սկսել է պետական պաշտոններ ստանձնել. գյուղատնտեսության նախարարի տեղակալ, ապա էկոնոմիկայի նախարարի տեղակալ, իսկ վերջերս ազատվեց ՇՄՆ փոխնախարարի պաշտոնից: Իսկ ի՞նչ ունեցվածքով համակարգը լքեց Տիգրան Գաբրիելյանը: Նախկին փոխնախարարը, համաձայն 2024 թվականի հայտարարագրի, 2011 թվականին ձեռք է բերել բնակարան Երեւանի Էրեբունի վարչական շրջանում: Սեփական տրանսպորտային միջոց Գաբրիելյանը չի հայտարարագրել, սակայն շահագործում է սեփականության իրավունքով իրեն չպատկանող Lexus մակնիշի մեքենան: Նրա բանկային ավանդները կազմում են 69 հազար դրամ, բանկային հաշիվների մնացորդները՝ գրեթե 11 մլն դրամ, 3,5 հազար դոլար, 1.73 եվրո: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 12 հազար դոլար: Տիգրան Գաբրիելյանի՝ նախորդ տարվա եկամուտը կազմել է 52 մլն 88 հազար դրամ, որից 15 մլն դրամն աշխատանքի վարձատրություն է ՇՄ նախարարությունից, իսկ 2 մլն 693 հազարը ՀՀ ՊԵԿ-ից ստացած եկամտային հարկի վերադարձ է: Եկամտի մյուս մասը վարկեր են «Ակբա» բանկից եւ «Ամերիաբանկից»: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 32 մլն 895 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է, ինչը մարելու համար էլ նախկին փոխնախարարը ՊԵԿ-ից ստացել է եկամտահարկի վերադարձ: Տիգրան Գաբրիելյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:



Ինչո՞ւ նախաքննական մարմինը չի շտապում պատասխանատվության կանչել ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Սերգեյ Բագրատյանի որդուն կամ միջադեպի մյուս մասնակիցներին: Ո՞ւմ են փորձում փրկել իրավապահները: Հիշեցնենք, որ օգոստոսի 4-ին Երեւանում երեք քաղաքացու միջեւ տեղի էր ունեցել վիճաբանություն: Միջադեպի կիզակետում եղել է ԱԺ պատգամավոր Սերգեյ Բագրատյանի որդին՝ Շանթ Բագրատյանը, իսկ բախման պատճառը եղել է ավտոմեքենայի կայանման խնդիրը: Գնդակը այժմ Կոմիտեի որոշման դաշտում է, սպասում ենք պատասխանին: Սակայն ՔՊ-ական պատգամավորի որդուն հարցաքննել են ու կանգ առել: Նկատենք, որ ԱԺ ՔՊ-ական պատգամավորի որդին առաջին անգամ չէ, որ հայտնվել է իրավապահների տեսադաշտում, բայց, ինչպես ցույց է տալիս փորձը, ջրից չոր է դուրս գալիս: 2022 թվականին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի որդու՝ Շանթ Բագրատյանի մասնակցությամբ միջադեպով գործը ուշագրավ ավարտ ունեցավ: Նախաքննական մարմինը, ի դեմս ՀՀ Քննչական կոմիտեի, կարճել էր ԱԺ պատգամավորի որդու աղմկահարույց միջադեպի քրեական գործը: Ահա, թե ինչպես են մաքրվում իշխանական պատգամավորների որդիների մասնակցությամբ միջադեպերը: Բանն այն է, որ 2022 թվականի մայիսի 15-ին Վայոց ձորի մարզի գազալցակայանում ծեծկռտուք էր եղել: Մասնավորապես, 45-ամյա տնօրեն Վահե Ասատրյանին ծեծի էին ենթարկել, եւ միջադեպի կիզակետում հայտնվել էր ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի որդին՝ Շանթ Բագրատյանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեքշաբաթյա արձակուրդից վերադառնալուց հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանը անցկացրել է ՔՊ վարչության նիստ. քննարկվել է մարզերում ու տարածքային կառույցներում առաջիկա նշանակումների հարցը: Մեր աղբյուրների փոխանցմամբ, գործընթացը սկսվել է Սյունիքի մարզից. Գորիսի ՏԿ ղեկավարի պաշտոնում հաստատվել է ՔՊ պատգամավոր Արմեն Խաչատրյանի թեկնածությունը: Նիստում անդրադարձ է եղել նաեւ այլ մարզային ու տարածքային կառույցների ղեկավարների նշանակմանը: Փաշինյանը շեշտել է, որ ընտրություններից առաջ անհրաժեշտ է կատարել վերանշանակումներ՝ ըստ արդյունավետության, ինչը վկայում է՝ ՔՊ-ն արդեն լուրջ պատրաստվում է ընտրական գործընթացին: Հաջորդ նիստերին մյուս մարզերի «հարցերը կլուծվեն»: Իսկ մինչ այդ պետք է ՔՊ վարչության անդամի թեկնածուները շարունակեն իրենց քարոզչությունը:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ-ԵԿԵՂԵՑԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՐԹՎԻ՞ ՈՂՋԱԽՈՀՈՒԹՅԱՄԲ

ArmLur.am-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում զրուցել է Մայր Աթոռի միաբան, «Գարեգին Ի» գիտակրթական կենտրոնի փոխտնօրեն Տեր Շնորհք աբեղա Մարգսյանի հետ: Զրույցը հիմնավորապես վերաբերում էր իշխանություն-եկեղեցի փոխհարաբերություններին:

Հարցազրույցի առաջին մասը «Ժողովուրդ» օրաթերթի նախորդ՝3138 համարում (19.08.2025):

-Հայր Սուրբ, եկեղեցի-իշխանություն լարված հարաբերությունների ֆոնին, երբ, ինչպես արդեն խոսել էինք, հաճախ հնչում են քննադատություններ նաեւ եկեղեցու հասցեին, նշվում է նաեւ, թե իշխանության ներսում կան անձինք, որոնք աթեիստ են, Աստծուն չեն հավատում, եւ հենց այդ պատճառով էլ մշտապես քննադատական վերաբերմունք են դրսեւորում եկեղեցու հանդեպ: Ըստ Ձեզ՝ կա՞ նման բան: Արդյո՞ք սա է առաջացրել նրանց քամահրանքը կամ նույնիսկ ատելությունը եկեղեցու եւ հոգեւորականության նկատմամբ: Չէ՞ որ նրանց խոսքում հաճախ առկա է վրդովմունք. նրանք չեն հանդուրժում եկեղեցու քայլերն ու հայտարարությունները, երբեմն նույնիսկ Վեհափառի հանդուրժողականության մասին հայտարարություններն են համարում անընդունելի: Ի՞նչն է, ըստ Ձեզ, այս ամենի պատճառը:

-Հոգեւոր դաշտը եւ հավատքը այնպիսի միջավայր են, որտեղ որեւէ մեկը չի կարող ճշգրիտ հասկանալ կամ չափել դիմացինի հավատքի խորությունը: Սա չափազանց անձնական եւ ներքին դաշտ է, որի մեջ մտնելը ճիշտ չէ: Այդ իսկ պատճառով ես երբեք չեմ փորձի դատել կամ կշռադատել որեւէ մեկին նրա հավատքի չափով: Իբրեւ հոգեւորական, իբրեւ հայ ժողովրդի ծառա եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու սպասավոր՝ իմ պարտքն եմ համարում աղոթքով, անձնական օրինակով ու ծառայությամբ օգտակարություն բերել իմ ժողովրդին, պետությանը եւ հայրենիքին: Վստահ եմ, որ մարդուն կարելի է օգնել ոչ թե քննադատությամբ կամ դատելով, այլ առաջին հերթին սիրով, աղոթքով եւ ծառայությամբ:

-Հայր Սուրբ, բայց այսօր արդեն հասել ենք մի կետի, երբ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, որ եկեղեցու կանոնակարգերը պետք է փոխվեն: Արդյո՞ք վարչապետը նման իրավասություն ունի: Կարո՞ղ է նա որեւէ կերպ նախաձեռնել կամ պարտադրել այդ փոփոխությունները:

-Եկեղեցին, իբրեւ հաստատություն, ունի խորքային եւ բազմաշերտ կառուցակարգեր, որոնք երբեմն կարող են անընկալելի կամ դժվար հասկանալի թվալ արտաքին աշխարհին: Այստեղ միայն մարդկային գործոնը չէ որոշիչ: Պետք է հիշել, որ եկեղեցին ունի ընկալման երկու հարթություն. առաջինը՝ ադմինիստրատիվ եկեղեցին, որը մենք տեսնում ենք հոգեւորականության եւ կառույցների միջոցով, եւ երկրորդը՝ եկեղեցին որպես Քրիստոսի մարմին: Այս երկու հարթությունները սերտորեն կապակցված են միմյանց: Եթե փորձենք բացառել Աստծո ներկայությունն ու շնորհը, ինչպես նաեւ այդ շնորհից բխող իմաստությունը, ապա գուցե կառավարչական տեսանկյունից հնարավոր լինեն որոշ փոփոխություններ, մոդեռնիզացիայի փորձեր: Սակայն այդ պարագայում եկեղեցին կդադարի եկեղեցի լինելուց. այն կվերածվի սովորական հաստատության: Իսկ եկեղեցու հիմնական դերը Տիրոջից մեզ տրված առաքելությունն է՝ երկնքի Արքայության քարոզչությունը: Այդ քարոզչության շարունակականությունն իրականացվում է Եկեղեցու միջոցով: Եթե մենք բոլորս, որպես քրիստոնյաներ, գիտակցենք մեզ տրված այս գլխավոր ճշմարտությունը, ապա մնացած բոլոր հարցերը մեզ համար դառնում են ավելի պարզ եւ լուծելի:

Իմ համեստ կարծիքով՝ հայտարարություն անելուց կամ որեւէ քայլի դիմելուց առաջ անհրաժեշտ է խորությամբ ուսումնասիրել այդ հարցերը: Եթե կան մտահոգություններ կամ անհանգստություններ, վստահ եմ, որ հատկապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը պատրաստակամ է՝ նստելու քննարկումների սեղանի շուրջ, երկխոսելու եւ երկկողմանիորեն հասկանալու՝ ինչպիսին է մեր պատկերացումը եկեղեցու հանդեպ: Այդ մոտեցումն ավելի կառուցողական եւ խաղաղարար ճանապարհ է՝ գտնելու փոխըմբռնում եւ լուծումներ:

Ես համոզված եմ, որ ողջախոհությունը ի վերջո կհաղթի: Այսօր առկա լարվածությունը ժամանակի ընթացքում կհարթվի, եւ փոխադարձ լսելու, երկխոսելու ու համագործակցելու պատրաստակամությամբ հնարավոր կլինի հաղթահարել բոլոր դժվարությունները:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ՝ ԱՅՍՕՐ

ԿՓՈԽՎԻ՞ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Երեւանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոնի նստավայրում ավարտվեց «Սրբազան շարժման» առաջնորդ Բագրատ Սրբազանի եւ շարժման մյուս մասնակիցների գործով դատական առաջին նիստը:

Հաջորդ նիստը տեղի կունենա այսօր՝ օգոստոսի 20-ին՝ ժամը 14:30-ին Շենգավիթի դատարանում: Երկրորդ նիստի ընթացքում դատավորը կքննի ամբաստանյալների խափանման միջոցը փոխելու հարցը:

Ավելի վաղ հայտնել էինք, որ Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի Կենտրոնի նստավայրում մեկնարկել է «Սրբազան շարժման» առաջնորդ Բագրատ Սրբազանի եւ մյուսների գործով դատական առաջին նիստը:

Ըստ մեղադրական եզրակացության՝ Բագրատ Սրբազանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր կողմից նախաձեռնված եւ ղեկավարվող «Սրբազան պայքար» անվանումով շարժումն իրականացնելու մի քանի ամիսների ընթացքում, չկարողանալով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ թույլատրված եղանակներով իրագործել իր կողմից շարժման առջեւ դրված՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը ստանձնելու նպատակը, 2024 թվականի նոյեմբեր ամսից սկսած՝նպատակադրվել է այն իրագործել ՀՀ Սահմանադրությամբ չթույլատրված եղանակով, եւ այդ նպատակի իրականացման համար շարժման մի շարք մասնակիցների՝ Մովսես Շարբաթյանի, Հայկ Շահնազարյանի, Տիգրան Թոփալյանի, Լիդիա Մանթաշյանի, Հրայր Հակոբյանի, Կարո Օկումուշյանի, Արթուր Սարգսյանի, Իգոր Սարգսյանի, Արա Ռոստոմյանի, Արսեն Ղազարյանի, Արման Իսրայելյանի, Աղվան Արշակյանի, Արմեն Ալեքսանյանի, Միհրան Մախսուդյանի, Դավիթ Գալստյանի եւ այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ խմբի կազմում, ձեռք է բերել ահաբեկչություն կատարելու եւ իշխանությունը զավթելու համար անհրաժեշտ միջոցներ եւ գործիքներ, ինչպես նաեւ նրանք դիտավորությամբ ստեղծել են այլ պայմաններ՝այդ կերպ կատարելով իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն:

ՎԵՐՀԻՇԵԼՈՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԸ

Օգոստոսի 18-ին Ռուսաստանի դեսպանատունը «Ռոսստրուդնիչեստվոի» ներկայացուցչության հետ Արագածոտնի մարզում՝ «Օշականի Հերոսների» հուշարձանի մոտ, կազմակերպել էր հանդիսավոր միջոցառում՝ նվիրված Օշականի ճակատամարտի հաղթանակի 198-րդ տարեդարձին:

Հայաստանում Ռուսաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Մ.Վ. Սելեզնյովը կարեւորել է հայ եւ ռուս ժողովուրդների սխրանքների մասին հիշողության պահպանումը, ինչպես նաեւ պատմական անցյալը:

Միջոցառմանը մասնակցել են «Ռոսստրուդնիչեստվոի» ներկայացուցչության ղեկավար Վ. Պ. Ֆեֆիլովը, Հայաստանում Ռուսաստանի Անվտանգության Դաշնային Ծառայության Սահմանապահ Վարչության 102-րդ ռուսական ռազմակայանի եւ «Էրեբունի» ավիաբազայի ղեկավարությունը, արտաքին գործերի նախարարության եւ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աշխատակիցները, ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչները, Հայաստանում Բելառուսի դեսպանության ավագ խորհրդական Գ. Ս. Աքսյոնովը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ Հայ Առաքելական եկեղեցու հոգեւորականներ, ինչպես նաեւ հասարակական ակտիվիստներ:

1827 թվականի օգոստոսի 17-ին գեներալ-լեյտենանտ Ա. ի. Կրասովսկու հրամանատարությամբ ռուսական ջոկատը հայ աշխարհազորայինների հետ կատաղի մարտերի ընթացքում զսպեց բազմիցս գերազանցող պարսկական զորքերին՝պաշտպանելով հայ ժողովրդի գլխավոր հոգեւոր կենտրոնը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

ԱՊՀ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Անկախ պետությունների համագործակցությունը հույս ունի, որ Վաշինգտոնում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ստորագրված փաստաթղթերը կծառայեն որպես խաղաղության համաձայնագրի հիմք: Ինչպես տեղեկացնում է ТАСС-ը, այդ մասին հայտարարել է ԱՊՀ գլխավոր քարտուղար Սերգեյ Լեբեդեւը՝ կազմակերպության կանոնադրական եւ այլ մարմիններում Համագործակցության անդամ պետությունների մշտական լիազոր ներկայացուցիչների խորհրդի նիստից առաջ:

«Ինչպես մի ժամանակ մենք բոլորս Համագործակցության երկրներում գոհ էինք Ղրղզստանի եւ Տաջիկստանի միջեւ միջպետական սահմանի վերաբերյալ պայմանագրի ստորագրումից, այնպես էլ հիմա շատ գոհ ենք այս համատեղ հռչակագրի ստորագրումից: Մենք կարծում ենք, որ սա անհամաձայնությունների վերջնական կարգավորման եւ Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ խաղաղության պայմանագրի կնքման ճանապարհին եղած փուլերից մեկն է»:

Նա հավելել է, որ խաղաղության համաձայնագիրը թույլ կտա այդ հանրապետությունների տարածքում անցկացնել ԱՊՀ բարձրագույն մարմինների ավելի լիարժեք նիստեր:

«Հուսով եմ, որ այս հանրապետությունները կարող են ավելի ակտիվորեն մասնակցել Անկախ պետությունների համագործակցության գործունեությանը», - ընդգծել է Լեբեդեւը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԻՐԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆԵԼ ԵՆ 2-ՐԴ ԿԱՄՈՒՐՋ ԿԱՌՈՒՑԵԼ

Հայաստանն ու Իրանը սահմանին երկրորդ կամուրջ կառուցելու համաձայնություն են ձեռք բերել:

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ մամուլի համար հայտարարությունների ժամանակ այս մասին հայտնեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Փաշինյանը հիշեցրեց, որ Հայաստանն ու Իրանը ռազմավարական ուղենիշ են սահմանել՝ երկկողմ առեւտրաշրջանառության ծավալները հասցնելու նախ 1, ապա 3 մլրդ դոլարի:

«Կարող ենք արձանագրել, որ փաստացի մոտեցել ենք 1 միլիարդի ուղենիշին եւ հետեւողականորեն աշխատում ենք հաջորդ թիրախին հասնելու ուղղությամբ: Այս իմաստով ԵԱՏՄ անդամ պետությունների եւ Իրանի միջեւ ուժի մեջ մտած ազատ առեւտրի համաձայնագիրը նոր հնարավորություններ է ընձեռում երկու երկրների գործարարների համար», - ասաց վարչապետը:

Ակտիվ քաղաքական երկխոսությանը զուգահեռ՝ Իրանի հետ Հայաստանի փոխգործակցությունն ընդգրկում է բազմաթիվ այլ բնագավառներ՝ տնտեսական, ենթակառուցվածքային, էներգետիկ, առողջապահական, մշակութային, բնապահպանական եւ այլն, որոնցից յուրաքանչյուրում կողմերը տարեցտարի սահմանում են նոր հորիզոններ:

Վարչապետը նշեց՝ Հայաստանի եւ Իրանի միջեւ առկա ենթակառուցվածքային մի շարք ծրագրեր արդեն իսկ թեւակոխել են գործնական փուլ: Այդ ծրագրերը ռազմավարական նշանակություն ունեն Հայաստանի համար: Դրանցից է, օրինակ, Քաջարան-Ագարակ 32 կմ ճանապարհային հատվածը, որի շինարարությունը հայկական կողմը վստահել է իրանական ընկերությանը: Փաշինյանը համոզմունք հայտնեց, որ ճանապարհը շահագործման կհանձնվի սահմանված ժամկետում:

«Հաշվի առնելով մեր պետությունների միջեւ օրեցօր աճող փոխադրումների ծավալը՝ համաձայնություն ենք ձեռք բերել Հայաստան-Իրան սահմանին երկրորդ կամուրջ կառուցելու վերաբերյալ», - ասաց Փաշինյանը:

Փաշինյանն ու Փեզեշքիանը քննարկել են նաեւ էներգետիկ ոլորտի ընթացիկ կարեւորագույն՝ Հայաստան-Իրան էլեկտրահաղորդման 3-րդ գծի նախագիծը:

Երկու երկրներն ունեն հստակ փոխըմբռնում, որ նախագիծը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտվի:

Երրորդ գծի շահագործման շնորհիվ Հայաստանը կկարողանա ավելի շատ էլեկտրաէներգիա արտահանել Իրան:

Վարչապետը վերահաստատեց, որ Հայաստանի Հանրապետությունը չափազանց կարեւորում է Իրանի հետ ռազմավարական բնույթի հարաբերությունները:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՍՏՈՐԱԳՐՎԵՑԻՆ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում Հայաստանի եւ Իրանի միջեւ ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը ստորագրեցին համատեղ հայտարարություն:

Հայաստանի եւ Իրանի ԱԳ նախարարությունների միջեւ ստորագրվեց 2025-2027 թվականների քաղաքական խորհրդակցությունների մասին հուշագիր: Հայկական կողմից փաստաթուղթը ստորագրեց Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, իրանական կողմից՝ Իրանի ԱԳ նախարար Աբաս Արաղչին:

Հայաստանի էկոնոմիկայի նախարարության եւ Իրանի ստանդարտների ազգային կազմակերպության միջեւ ստորագրվեց ստանդարտացման, հավատարմագրման, համապատասխանության գնահատման, չափագիտության եւ տեխնիկական կանոնակարգման ոլորտներում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր: Հայկական կողմից փաստաթուղթը ստորագրեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, իրանական կողմից՝ Իրանի նախագահի տեղակալ Սեյեդ Համիդ Փուրմոհամադին:

Հայաստանի էկոնոմիկայի նախարարության եւ Իրանի մշակութային ժառանգության, զբոսաշրջության եւ ձեռարվեստի նախարարության միջեւ զբոսաշրջության ոլորտում համագործակցության մասին հուշագիր ստորագրվեց: Հայկական կողմից ստորագրեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, իրանական կողմից՝ ԻԻՀ մշակութային ժառանգության, զբոսաշրջության եւ ձեռարվեստի նախագահ Սալեյ Ամիդին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ու Իրանի կոոպերացիայի, աշխատանքի եւ սոցիալական բարեկեցության նախարարության միջեւ ստորագրվեց մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում 2025-2029 թվականների համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր: Հայկական կողմից փաստաթուղթը ստորագրել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, իրանական կողմից՝ ԻԻՀ հանքարդյունաբերության նախարար Սեյեդ Մոհհամադ Աթաբաքը:

Հայաստանի քաղաքաշինության կոմիտեի եւ Իրանի ճանապարհների եւ քաղաքաշինության նախարարության միջեւ ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր քաղաքաշինության եւ շինարարության ոլորտներում համագործակցության մասին: Հայկական կողմից փաստաթուղթը ստորագրել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վարդանյանը, իրանական կողմից՝ Իրանի ճանապարհների եւ քաղաքաշինության նախարար Ֆարզանե Սադեը:

Հայաստանի առողջապահության նախարարության դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի եւ Իրանի առողջապահության եւ բժշկական կրթության նախարարության սննդի եւ դեղերի կառավարման վարչության միջեւ ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր բժշկական արտադրանքի կարգավորման բնագավառում համագործակցության մասին: Հայկական կողմից փաստաթուղթը ստորագրեց ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արմեն Գասպարյանը, իրանական կողմից՝ ՀՀ-ում Իրանի դեսպան Մեհդի Սոբհանին:

Հայաստանի ազգային արխիվի եւ Իրանի ազգային գրադարանի եւ արխիվի միջեւ ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր: Հայկական կողմից ստորագրեց Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Արթուր Ստեփանյանը, իրանական կողմից՝ Իրանի մշակույթի եւ իսլամական առաջնորդության նախարարի տեղակալ Ռայեդ Ֆարիդզադեն:

Հայաստանի ազգային գրադարանի եւ Իրանի ազգային գրադարանի եւ արխիվի միջեւ ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր: Հայկական կողմից ստորագրեց Իրանում Հայաստանի դեսպան Գրիգոր Հակոբյանը, իրանական կողմից՝ Իրանի մշակութային ժառանգության, զբոսաշրջության եւ ձեռարվեստի նախարարության միջազգային հարաբերությունների եւ հանրային դիվանագիտության կենտրոնի ղեկավար Մոջթաթոլլահ Այուբին:

Հայաստանի պատմության թանգարանի եւ Իրանի ազգային թանգարանի միջեւ ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր: Հայկական կողմից ստորագրեց Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը, իրանական կողմից՝ Իրանի մշակութային ժառանգության, զբոսաշրջության եւ ձեռնարվեստի նախարարության միջազգային հարաբերությունների եւ հանրային դիվանագիտության կենտրոնի ղեկավար Մոջթաթոլլահ Այուբին:

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության Հայաստանի կինոյի հիմնադրամի եւ Իրանի մշակույթի եւ իսլամական առաջնորդության նախարարության կինոյի հարցերի կազմակերպման միջեւ ստորագրվեց կինոփոխանակումների եւ համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր: Հայկական կողմից ստորագրեց Հայաստանի կինոյի հիմնադրամի տնօրեն Դավիթ Բանուչյանը, իրանական կողմից՝ Իրանի մշակույթի եւ իսլամական առաջնորդության նախարարի տեղակալ, կինոմատոգրաֆիայի աուդիովիզուալ կազմակերպության նախագահ Ռայեդ Ֆարիդզադեն:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՈՒԺ Է ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ

Նինա Կարապետյանցը դադարեցնում է 25 տարվա իրավապաշտպանի գործունեությունը եւ այսուհետեւ զբաղվելու է քաղաքական գործունեությամբ: «Ես ինձ համար շատ ծանր որոշում եմ կայացրել՝ դադարեցնել իրավապաշտպան գործունեությունն ու զբաղվել այն գործունեությամբ, որը իսկապես կարող է փոփոխություն բերել», - երեկ՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ, հայտարարեց իրավապաշտպան Նինա Կարապետյանցը:

Նա մեկն է «ՆԺԱՐ» սահմանադրական շարժման հիմնադիրներից: ArmLur.am-ը զրուցել է Կարապետյանցի հետ քաղաքական շարժման, նոր կառավարման համակարգ ստեղծելու, նախկիններին հետ կապ ունենալու եւ գալիք անելիքների մասին: Արդեն նախկին իրավապաշտպանը չբացեց չակերտները, թե ով է այս քաղաքական շարժման առաջնորդը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԵԳԱԿԻ ՎՐԱ ՀԶՈՐ ԲՌՆԿՈՒՄ Է ԳՐԱՆՑՎԵԼ

Մասնագետները գրանցել են նախավերջին հզորության M1.1 դասի արեգակնային բռնկում: Այս մասին ՏԱՍՍ-ին հայտնել են Է.Կ. Ֆեդորովի անվան կիրառական երկրաֆիզիկայի ինստիտուտից:

«Օգոստոսի 19-ին 4188 արեւային բծերի խմբում (S09E88) գրանցվեց M1.1 50 րոպե տեւողությամբ բռնկում», - նշել են նրանք այնտեղ:

Ինստիտուտի տվյալներով՝ առաջիկա երկու օրերին սպասվում է չափավոր բռնկումային ակտիվություն, չեն բացառվում X դասի բռնկումները: Գեոմագնիսական դաշտը կարող է անկայուն լինել, ճառագայթային իրավիճակը՝ անխախտ: Միաժամանակ, օրվա ընթացքում հնարավոր է բարձր հաճախականության ռադիոկապի պայմանների վատթարացում:

Արեգակնային բռնկումները բաժանվում են հինգ դասի՝ կախված ռենտգենյան ճառագայթման հզորությունից՝ A, B, C, M եւ X:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ո՞Վ Է ԱՌԱՋԻՆԸ ԳՈՐԾԱՐԱՐԻՆ ԳՏԵԼ ՄԱՀԱՑԱԾ

Օգոստոսի 17-ին տարածված լուրը, որ «Կապիտալ Բիլդ» ընկերության սեփականատերերից գործարար Կարեն Գասպարյանն ինքնասպան է եղել, շոկային էր: Մարդ, որը կյանքում լուրջ խնդիրներ չի ունեցել, հանկարծ կրակել է ինքն իր վրա:

ArmLur.am-ը օգոստոսի 18-ին՝ առավոտյան, արդեն դեպքի վայրում էր: Նախնական տվյալներով ինքնասպան եղած գործարար Կարեն Գասպարյանը վերջին շրջանում շատ տխուր է եղել: ArmLur.am-ի հետ զրույցում նրա հարեւանները պատմեցին, որ անգամ այնքան մտազբաղ է եղել, որ երբեմն չի բարեւել հարեւաններին: Շենքի բնակիչների խոսքով՝ գործարարին առաջինը ինքնասպան վիճակում գտել է նրա վարորդը, որը ոստիկանության նախկին աշխատակից Անդրանիկ Խոջոյանն է: Ըստ նրանց՝ վարորդը զանգահարել է գործարարին, նա չի պատասխանել, որից հետո մտել է ավտոկայանատեղի, բացել է դարպասները, տեսել, որ մեքենան տեղում է, ու կրկին ավտոկայանատեղու դուռը փակել է, գնացել՝ չպատկերացնելով, որ գործարարը մեքենայի մեջ կարող է անշնչացած լինել:

Անցել է 2 ժամ, գործարար Կարեն Գասպարյանի վարորդը կրկին վերադարձել է Դեմիրճյան 1 շենք, որտեղ ընտանիքի հետ բնակվում էր գործարար Կարեն Գասպարյանը, կրկին բացել է ավտոկայանատեղու դարպասները ու մոտեցել մեքենային, որից հետո շենքում լսվել են բղավոցի ձայներ՝ «Էս ի՞նչ արեցիր, ի՞նչ արեցիր....»:

Շենքի բնակիչների պատմելով՝ իրավապահները երբ եկել են դեպքի վայր, անմիջապես տեսախցիկներն են ստուգել, եւ տեսանյութում երեւում է, թե ինչպես է գործարար Կարեն Գասպարյանը միայնակ մտնում իր ավտոկայանատեղի, փակում է դարպասները, նստում մեքենան, փակում դռներն ու լուսամուտները, ապա կրակոցով սպանում իրեն: Բնակիչների խոսքով, երբ նրան գտել են անշնչացած վիճակում, չեն կարողացել բացել մեքենայի դռները: Վարորդը գնացել, տանից բերել է մեքենայի պահուստային բանալիները ու բացել մեքենայի դռները՝ գտնելով նրան արդեն մի քանի ժամ մահացած վիճակում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ գործարարն ամուսնացած էր, ուներ 2 երեխա՝ տղան 13 տարեկան, աղջիկը 20: Բնակիչների խոսքով՝ նրանք բարեկեցիկ կյանքով էին ապրում, ու առեղծված է, թե ինչու պետք է Կարենը գնար այդ քայլին: Հարեւանները ArmLur.am-ին տեղեկացրին, որ լսել են՝ որոշ ժամանակ առաջ Կարեն Գասպարյանը ֆինանսական խնդիրներ է ունեցել, սակայն ամեն ինչ կարգավորվել էր, բայց ընկերները պատմել են նաեւ, որ տեւական ժամանակ է՝ ինչ հրավիրում էին նրան որեւէ խնջույքի կամ առիթի, իսկ Կարենը հրաժարվում էր՝ ասելով, թե տրամադրություն չունի, չի ցանկանում ներկա գտնվել : Դեմիրճյան 1 շենքի համատիրության ղեկավարը թույլ չտվեց բարձրանալ գործարարի տուն՝ նշելով, որ ընտանիքը վատ վիճակում է, պարբերաբար շտապօգնություն է գալիս:

ArmLur.am-ն արդեն հայտնել էր, որ Կարեն Գասպարյանը «Կապիտալ Բիլդ» կառուցապատող կազմակերպության բաժնետերերից մեկն է: Դեպքի մասին առաջինը ահազանգել էր Shamshyan.com-ը եւ հայտնել, որ դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը) եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով (հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը): Նշանակվել են դատաբժշկական, դատաձգաբանական փորձաքննություններ: Կատարվում է նախաքննություն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

Օգոստոսի 15-ի ուշ երեկոյան ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած Վանաձորի Չուխաջյան փողոցի բնակիչը հայտնել է, որ տնից գողացել են գումար եւ այլ իրեր: Այս մասին տեղեկացնում են ՆԳՆ ոստիկանությունից:

«Մեկնեց Քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության օպերատիվ խումբ: Տանտերը տվեց հաղորդում, որ նույն օրը՝ ժամը 21-ից 22-ն ընկած ժամանակահատվածում, պատշգամբի եվրադռնով կամ պատուհանով մուտք են գործել բնակարան եւ գողացել 500 հազար ՀՀ դրամ:

Կազմված փաստաթղթերն ուղարկվեցին Լոռու մարզային քննչական վարչություն, որտեղ նախաձեռնվեց քրեական վարույթ:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում քրեական ոստիկանները ստացան տեղեկություն, որ գողությունը կատարել է տանտիրոջ որդին: Հետագա միջոցառումների արդյունքում 28-ամյա երիտասարդը խոստովանեց արարքը: Հանգամանքները նախաքննությամբ պարզվում են»,- ասված է հաղորդագրությունում:

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Իրավապահ մարմինները մտել են մարզեր, համայնքի ղեկավարները ինչ-ինչ շահագրգռվածության դիմաց վարժական հավաքից խուսափողներին բանակ չուղարկելու համար զինկոմներին կեղծ տվյալներ են տալիս:

Մասնավորապես, վարժական հավաքներին պարտադիր ենթակա գնացող անձինք ՌԴ-ում են, մինչդեռ ԱԱԾ-ն ուշագրավ օպերատիվ տվյալներ է ստացել, որ վարժական հավաքի գնացող անձինք ՀՀ-ում են եղել:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ապրիլի 22-ին մեկնարկած 25-օրյա վարժական հավաքների կազմակերպման զինապարտների գտնվելու վայրի մասին փետրվարի 19-ին զինկոմիսարիատ ներկայացրած անվանացուցակների մեջ կատարվել են իրականությանը չհամապատասխանող գրառումներ, որը հաստատվում է համայնքապետերի կողմից:

Մասնավորապես, Ա.Լ-ի, Ն.Ծ-ի, Ս.Գ-ի անվան դիմաց կատարվել է «ՌԴ բացակա» գրառումը, սակայն վերջինս 2024 թ. մայիսի 1-ից գտնվում է ՀՀ-ում: Ավելին՝ սա միակ դեպքը չէ. իրավապահների ձեռքում մի շարք անձանց տվյալներ եւս կան: Ձեռնարկված օպերերատիվ հետախուզական միջոցառումներով եւ կատարված ստուգումների արդյունքում պարզվել է, որ նշված անձինք տվյալ ժամանակահատվածում գտնվել են իրենց բնակավայրում, սակայն անվանացուցակներում կատարված եւ իրականությանը համապատասխանող գրառումների արդյունքում վերջիններս խուսափել են վարժական հավաքներին մասնակցելուց: Դեպքով զբաղվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎԵՃԸ ԱՎԱՐՏՎԵԼ Է ՍՊԱՆՈՒԹՅԱՄԲ

ՀՀ ՔԿ Երեւան քաղաքի քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ օտարազգի քաղաքացին, վրեժ լուծելու շարժառիթով, դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել մեկ այլ օտարերկրյա քաղաքացու մարմնի տարբեր հատվածներին՝ սպանելով նրան:

Մեկ անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով (սպանությունը): Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

ՆԳՆ–Ն ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՆԳՆ սպասարկման գրասենյակները շարունակում են իրականացնել շրջիկ սպասարկում՝ քաղաքացիներին մատուցելով եւ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության, եւ հաշվառման-քննական բաժինների ծառայություններ: Այս մասին հայտնել են ՆԳՆ-ից:

ՆԳ նախարարի հրամանի համաձայն՝ օգոստոսի 21-ին ծառայություններ կմատուցվեն. ժամը 11:30-16:00 Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում՝ համայնքապետարանի հարեւանությամբ, ժամը 10:00-14:00 Կոտայքի մարզի Գառնի համայնքում՝ համայնքապետարանի հարեւանությամբ, Շրջիկ սպասարկման շրջանակում քաղաքացիները կարող են փոխանակել անձնագիրը, ստանալ ժամանակավոր պաշտպանության վկայական, տեղեկանքներ, իսկ ԼՂ-ից տեղահանված անձինք ՀՀ քաղաքացիություն ստանալու համար կարող են տեղում դիմումներ ներկայացնել: Վարորդական իրավունքի ու սեփականության վկայականների, հաշվառման վկայագրի փոխանակման կամ կորստի դեպքում քաղաքացիները, մոտենալով շրջիկ գրասենյակ, կարող են նորը ստանալ, օգտվել նաեւ հաշվառման-քննական բաժինների կողմից մատուցվող այլ ծառայություններից:

Օգոստոսի 21-ին շրջիկ սպասարկման գրասենյակները կլինեն նաեւ Կոտայքի մարզի Չարենցավան եւ Բյուրեղավան համայնքներում՝ օգոստոսի 14-ին ընդունված դիմումների շրջանակներում փաստաթղթերը հանձնելու նպատակով:

ԿԱ 4 ՏՈՒԺԱԾ

Օգոստոսի 18-ին ավտովթար է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 14:20-ի սահմաններում Ապարան-Եղվարդ ավտոճանապարհի Բուժական բնակավայրի ժողովրդին հայտնի Բուժականի խաչմերուկում բախվել են «Volkswagen Jetta» ու «Opel» մակնիշի ավտոմեքենաները: Բախման հետեւանքով «Opel»-ը դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել: Ինչպես հայտնում է Shamshyan.com-ը, վթարի հետեւանքով 4 հոգուց 2-ը՝ երեխաները, տեղափոխվել են «Սուրբ Աստվածամայր», իսկ մեծահասակները՝ «Արմենիա» բժշկական կենտրոններ:

Վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են վարորդների եւ վիրավորների ինքնությունը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 18-ից 19-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 161 դեպք, որից 10-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԸ ՉԻ՞ ԱՇԽԱՏՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել այն մասին, որ Տավուշի մարզպետարանի պաշտոնական կայքի՝ «Տեղեկատվական» բաժնի «Նորություններ» ենթաբաժնում հունիսի 26-ից մինչեւ օգոստոսի 13-ը՝ ավելի քան մեկուկես ամիս, ոչ մի լուր, տեղեկատվություն չի տեղադրվել: Ինչն է դրա պատճառը: Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքի «Տեղեկատվական» բաժնի «Նորություններ» ենթաբաժնում տեղեկատվություն չտեղադրվելը պայմանավորված է տեխնիկական խնդիրների պատճառով»: Տավուշի մարզպետարանը պետական բյուջեից տարեկան հարյուրավոր միլիոն դրամների ֆինանսավորում է ստանում, այդ թվում՝ մեծ պարգեւավճարներ, սակայն ինտերնետային մի կայք չեն կարողանում անխափան աշխատեցնել:

ՏՆՕՐԵՆԻ ԺՊ

«Հայաստանի էլեկտրական ցանցերի» ինտերնետային կայքից տեղեկացանք, որ ՀԷՑ « Աղստեւ» մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Սարո Դավթյանը: Տավուշի մարզն ընդգրկող մասնաճյուղի տնօրենի պաշտոնը բավական ժամանակ թափուր էր Նիկոլայ Ղալթախչյանի պաշտոնանկությունից հետո: Իջեւանից հայտնեցին, որ Սարո Դավթյանը իջեւանցի երիտասարդ է, նա մինչ այդ եղել է «Աղստեւ» մասնաճյուղի արտադրական բաժնի պետը: Արդյոք նրան կնշանակե՞ն մասնաճյուղի տնօրեն, թե՞ էլեկտրական ցանցերից անտեղյակ ՔՊ-ականի. ցույց կտա ժամանակը:

ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ՏԱՐԱԾՔ Է ԶԱՎԹՎԵԼ

Դիլիջան քաղաքի բնակչուհի Ամալյա Սարգսյանը լրագրողիս հայտնել է, որ իրենց ընտանիքը քաղաքի Թախտա թաղամասի հնաբնակներից է, այնտեղ տուն է կառուցել, բնակվում է անցյալ դարի 60-ական թվականների սկզբից: Ընտանիքի հայրը շուտ է մահացել: Ընտանիքի մայրը եւս մահացած է, Ամալյան, իր եղբայրը, քույրերը մորից ժառանգություն պետք է ստանան: Վերջին մի քանի տարիներին Մոսկվայում գտնված Ամալյան, վերադառնալով Դիլիջան, հայտնաբերել է, որ իրենց հարեւանը տունը ծախել է. այդ անշարժ գույքը 6 սեփականատեր է փոխել: Այժմ հարեւանի տան տեղում հանգստյան գոտի է՝ քոթեջներ: Դրա կառուցապատողը ապօրինի կերպով քանդել է Սարգսյանների ընտանիքին պատկանող, նրանց հողամասում գտնվող պատը, թեք տարածքը հարթեցրել, Սարգսյանների տարածքից զավթել 60 քառակուսի մետր: Այդ ամենը կատարվել է 2021 թվականից հետո՝ Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանի պաշտոնավարման օրոք: Համայնքի ղեկավարը ինչո՞ւ է աչք փակել ապօրինի գործողությունների, տարածքի զավթման, ռելիեֆն ինքնակամ փոխելու վրա: Ամալյա Սարգսյանի եղբայրը՝ Ժիրայր Սարգսյանը այդ ապօրինությունների դեմ դիմել է Վարչական դատարան, տուժած ընտանիքը նաեւ դիմել է իրավապահներին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ՉԻ ՀԱՋՈՂՎԵԼ

ԵՐԵԽԱՆ ԿԱՏԱՂՈՒԹՅԱՄԲ Է ՎԱՐԱԿՎԵԼ ՈՒ ՄԱՀԱՑԵԼ

Օրերս Արմավիր մարզի Ակնալիճ համայնքում 3 տարեկան երեխայի մահ էր արձանագրվել:

Ըստ ներքին խոսակցությունների՝ դեպքը տեղի է ունեցել մոտ մեկուկես ամիս առաջ, իսկ պատճառը կատաղած շան կծելն էր: Շունը կծել էր եւ երեք տարեկան երեխային, որը մահացել է, եւ մահացած երեխայի մեծ եղբորը: Բարեբախտաբար, մյուս երեխան ողջ է:

Այս առնչությամբ ArmLur.am լրատվականը զրուցել է Ակնալիճ համայնքի ղեկավար Շողիկ Մուրադյանի հետ, որը հայտնեց հետեւյալը. «Այս պահին ընթանում է երեխայի ինքնահողի արարողությունը, գերեզմանատանն են: Երեկ էլ հուղարկավորությունն էր: Երեւի թե մի 40 օր առաջ էր շունը կծել երեխային: Հիմա հստակ չեմ կարող ասել՝ երբ, ինչ հանգամանքներում, որովհետեւ տարբեր բաներ են ասում: Գիտեմ, որ հենց իրենց բակի շունն է կծել, շատ փոքր մի շուն է: Երեխան էլ շան հետ խաղալիս է եղել: Այս պահին ավելին ասել չեմ կարող, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարազատները շատ ծանր վիճակում են: Երեխան, երբ հիվանդանոցում է եղել, ծնողները ո՛չ խոսում էին, ո՛չ պատասխանում: Շատ վատ վիճակում են», - ասաց համայնքի ղեկավարը:

Թե երեխան ինչքան ժամանակ է մնացել հիվանդանոցում, համայնքապետը դժվարանում է պատասխանել, բայց մեկ-երկու օրը կասկածանքով հաստատում է. «Կարծում եմ՝ այո՛, մեկ-երկու օր, երեւի, մնացել է հիվանդանոցում»:

ՀՀ առողջապահության նախարարության մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանն էլ մեզ հետ զրույցում նշեց հետեւյալը. «Երախային հիվանդանոց են տեղափոխել դեպքից բավականին ուշ, ծանր վիճակում, այն ժամանակ, երբ որեւէ բան հնարավոր չէր անել: Կլինիկական պատկերն արդեն ակնհայտ էր: Տեղամասային բժշկի չեն դիմել: Հետազդակային կանխարգելումը կենսական է կծածի դեպքում. կատաղության դեմ պատվաստանյութը առկա է ՀՀ բոլոր բուժհաստատություններում, պետք է խիստ հետեւողական լինել եւ արագ կազմակերպել տուժածի հոսպիտալացումը»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՆԸ ԵՐԲԵՔ ՉԻ ԳՆԱ ՋԻՋՈՒՄՆԵՐԻ

Իրանի առաջնորդի միջազգային հարցերով ավագ խորհրդական Ալի Աքբար Վելայաթին հայտարարում է, որ իրանական ժողովուրդը երբեք չի գնա զիջումների հայրենիքի ազգային անվտանգության հարցում: Նա X սոցիալական ցանցում գրել է. «Հզոր ու հնագույն իրանական ժողովրդի հպարտ պատմությունը ցույց է տալիս, որ այս ժողովուրդը երբեք չի թույլատրի իր ազգային անվտանգության հարցում որեւէ փոխզիջում»:

Հիշեցնենք, որ անցած շաբաթ Վելայաթին հանդիպել է Իրանի հետ երկկողմ հարաբերությունները համակարգող Հայաստանի արտգործնախարարի տեղակալ Վահան Կոստանյանի հետ: Քնարկումների սկզբում Կոստանյանը ներկայացրել է տարածաշրջանային վերջին զարգացումները եւ Վաշինգտոնում կայացած բանակցությունների մասին մանրամասներ՝ շեշտելով երկու երկրների պատմական կապերի պահպանումն ու բարի դրացիության կարեւորությունը: «Մենք խորապես նվիրված ենք Իրանի հետ բարեկամական հարաբերություններին եւ արժեքավորում ենք այս պատմական կապերը», - նշել է Կոստանյանը:

Վելայաթին իր հերթին ընդգծել է, որ Իրանն անընդունելի է համարում իր անվտանգությանը դեմ ցանկացած քայլ եւ ողջունում է երկկողմ համագործակցության ընդլայնումը: Նա հավելել է, որ Իրանը մշտապես կողմ է հարեւանների միջեւ տեւական խաղաղությանը եւ, ավելին, առավել քան որեւէ այլ երկիր կարեւորում է Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ խաղաղության հաստատումը: «ԽՍՀՄ փլուզումից եւ տարածաշրջանի երկրների անկախացումից հետո Իրանը առաջիններից էր, որ քայլեր ձեռնարկել է Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղություն հաստատելու ուղղությամբ, եւ ԱԳ նախարարի պաշտոնավարմանս ընթացքում ես առավելագույն ջանքեր եմ գործադրել այդ ուղղությամբ», - ասել է Վելայաթին:

Նա հիշեցրել է նաեւ Իրանի «գործնական քայլերը» խաղաղության համար. «Այդ ճանապարհին մենք նույնիսկ ունեցել ենք նահատակներ, այդ թվում՝ մի շարք իրանցի դիվանագետների ընտանիքների անդամների զոհվելը, երբ Ղարաբաղյան պատերազմի ժամանակ հրթիռը խոցեց նրանց ինքնաթիռը: Այս պատմական փորձը վկայում է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը լրջորեն վճռական է խաղաղություն հաստատելու հարցում»:

Վելայաթին եզրափակելով անդրադարձել է Իրանի արտաքին քաղաքականության սկզբունքներին՝ընդգծելով, որ «տարածաշրջանի ճակատագիրը պետք է որոշվի բացառապես տարածաշրջանի երկրների կողմից»:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆԻ ԴՌՆԵՐՆ ԵՆ ԸՆԿԵԼ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ չորրորդ դատական հայցն է ներկայացվել «Իմնեմնիմի» փոդքասթի համահեղինակ Վազգեն Սաղաթելյանի դեմ:

Այս անգամ Սաղաթելյանի դեմ դատական հայց է ներկայացրել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը: Պատգամավորը հայցի պահանջում նշել է՝պատիվն ու արժանապատվությանը պատճառված վնասի հատուցում: Գումարային պահանջի մասին դեռեւս հայտնի չէ:

Հիշեցնենք, որ օգոստոսի 15-ին տեղեկացրել էինք՝ Սաղաթելյանի դեմ դատական հայց է ներկայացրել ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Տիգրան Պետրոսյանը:

ArmLur.am-ը հայտնել էր, որ ՍԱՏՄ ղեկավարը Սաղաթելյանից պահանջում է հօգուտ իրեն բռնագանձել 4.000.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության դիմաց ոչ նյութական վնասի փոխհատուցում: Պետրոսյանը պահանջել է նաեւ Սաղաթելյանին պարտավորեցնել, որպեսզի նույն լրատվականով կամ առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող տպագիր մամուլով վերջինս իրենից հրապարակային ներողություն խնդրի:

Պետրոսյանը նաեւ պահանջում է, որպեսզի Սաղաթելյանը հերքում հրապարակի. «Հերքում. Ես՝ Վազգեն Սաղաթելյանս, հրապարակայնորեն հերքում եմ տալիս Տիգրան Պետրոսյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու համար»: Հիշեցնենք, որ օգոստոսի 4-ին տեղեկացրել էինք, որ ԱԺ ՔՊ-ական պատգամավոր, ՔՊ վարչության անդամ Արուսյակ Մանավազյանն էր դատի տվել «Իմնեմնիմի» փոդքասթի համահեղինակ Վազգեն Սաղաթելյանին: Իսկ օգոստոսի 8-ին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը՝ կրկին նույն պահանջով:

Նշենք, որ մի քանի շաբաթ առաջ «Իմնեմնիմի» փոդքասթի շրջանակում՝ ուղիղ եթերում, Վազգեն Սաղաթելյանի եւ Նարեկ Սամսոնյանի մասնակցությամբ «Ով ում է դոմփում ՔՊ-ում» վերնագրով փոդքաստում վերը նշված պաշտոնյաների մասին անձնական տեղեկություններ էր հրապարակել, որը, ըստ ներկայացված հայցերի, զրպարտություն է: Պաշտոնյանները պահանջում են հերքում եւ փոխհատուցում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար, 28 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2025 թ.-ի սեպտեմբերի 02-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով:

Թիվ 47 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 76.6 գր. ընդհանուր քաշով, որից 14.5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը՝ 14 գր.) 500 հարգի, 279.760 ՀՀ դրամ, 62.1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդեր եւ ջարդոն 585 հարգի՝ 1.460.160 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 1.739.920 ՀՀ դրամ: Թիվ 48 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 45.4 գր. ընդհանուր քաշով, որից 33.2 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդեր եւ ջարդոն (զուտ քաշը՝ 32.5 գր.) 585 հարգի՝ 770.380 ՀՀ դրամ, 7.3 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը՝ 5.8 գր) 500 հարգի՝ 115.900 ՀՀ դրամ, 4.9 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 190.570 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 1.076.850 ՀՀ դրամ: Թիվ 49 լոտ՝ ոսկյա զարդ 19.3 գր., որից 8.1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝7.6 գր) 585 հարգի՝180.150 ՀՀ դրամ,11.2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 10.9 գր) 500 հարգի՝ 217.810 ՀՀ դրամ լոտի մեկնարկային գինը 397.960 ՀՀ դրամ: Թիվ 50 լոտ՝ ոսկյա զարդ 23.7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 22.8գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 455.600 ՀՀ դրամ: Թիվ 51 լոտ՝ոսկյա զարդ 22.4 գր., որից 20.9գր. ընդհանուր քաշով(զուտ քաշը 20.6 գր) 585 հարգի՝488.300 ՀՀ դրամ,1.5գր. ընդհանուր քաշով 500 հարգի՝29.970 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 518.270 ՀՀ դրամ:Թիվ 52 լոտ՝ ոսկյա զարդեր 14 գր. ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 331.850 ՀՀ դրամ: Թիվ 53 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 4.3 գր. ընդհանուր քաշով, 958 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 167.200 ՀՀ դրամ: Թիվ 54 լոտ՝ ոսկյա զարդեր 5.6 գր. ընդհանուր քաշով, 500 հարգի, լոտի մեկնարկային գինը՝111.900 ՀՀ դրամ: Թիվ 55 լոտ՝ոսկյա զարդ 4.6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝4 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 94.800 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝բարվոք:

Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ. 043 004 227

«ԻՆԵԿՈԲԱՆԿ» - The Bank of New York Mellon. ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ Գ

ԸՆԴԼԱՅՆԵԼՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ինեկոբանկը» մեկնարկել է նոր եւ լայնածավալ համագործակցություն ամերիկյան առաջատար բանկերից մեկի՝ The Bank of New York Mellon-ի հետ՝ ընդլայնելով միջազգային փոխանցումների աշխարհագրությունը եւ ապահովելով առավել արդյունավետ գլոբալ ֆինանսական ծառայություններ:

Այս համագործակցության շնորհիվ «Ինեկոբանկի» հաճախորդները՝ թե՛ ֆիզիկական եւ թե՛ իրավաբանական անձինք, կարող են ստանալ եւ իրականացնել ԱՄՆ դոլարով փոխանցումներ աշխարհի տարբեր ուղղություններով՝ ավելի արագ, հարմար եւ հուսալի եղանակով:

Ավելին՝ ս.թ. օգոստոսի 21-ից մինչեւ նոյեմբերի 30-ը ԱՄՆ դոլարով բոլոր փոխանցումներն «Ինեկոբանկի» միջոցով կիրականացվեն առանց միջնորդավճարի: Թղթակցային հարաբերությունների հաստատմանը զուգահեռ՝ այս գործընկերությունը ներառում է նաեւ The Bank of New York Mellon-ի կողմից առաջարկվող ֆինանսական ծառայությունների ավելի լայն շրջանակ:

«Հաշվի առնելով մեր հաճախորդների փոփոխվող կարիքներն ու միջազգային փոխանցումների աճող ծավալը՝ մենք շարունակում ենք ներդրումներ կատարել տարբեր ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ եւ ապահովում ոչ միայն ներկա պահանջները, այլեւ հիմք դնում երկարաժամկետ զարգացման համար: The Bank of New York Mellon-ի հետ այս գործընկերությունը եւս մեկ կարեւոր քայլ է՝ տրամադրելու մեր բոլոր հաճախորդներին առավել ժամանակակից, արագ եւ հուսալի բանկային ծառայություններ ինչպես մեր երկրում, այնպես էլ դրա սահմաններից դուրս»,- նշում է «Ինեկոբանկի» գործադիր տնօրեն Հայկ Ոսկանյանը:

Երկու բանկերի միջեւ համագործակցությունը կնպաստի հատկապես կորպորատիվ հաճախորդներին մատուցվող ֆինանսական ծառայությունների ընդլայնմանը՝ խթանելով նրանց ակտիվ ներգրավվածությունը միջազգային առեւտրի ոլորտում:

«Մենք շարունակաբար քայլեր ենք ձեռնարկում մեր հաճախորդների համար կայուն եւ տեխնոլոգիապես առաջադեմ հնարավորություններ ապահովելու ուղղությամբ: The Bank of New York Mellon-ի հետ այս գործընկերությունը դրա տրամաբանական շարունակությունն է, որը հատկապես կարժեւորեն մեր կորպորատիվ հաճախորդները: Ներկայիս գլոբալ բիզնես միջավայրում բանկային գործարքների արագությունը, հուսալիությունը եւ բազմազանությունը որոշիչ նշանակություն ունեն, եւ մենք տրամադրում ենք գործիքներ, որոնք թույլ են տալիս կազմակերպություններին զարգացնել իրենց բիզնեսը միջազգային առեւտրի ոլորտում»,- նշում է «Ինեկոբանկի» կորպորատիվ բիզնեսի տնօրեն Արտյոմ Չիչյանը:

Միջազգային փոխանցումների համար անհրաժեշտ տվյալները հասանելի են բանկի պաշտոնական կայքէջում եւ մասնաճյուղերում:

«Ինեկոբանկի» մասին

«Ինեկոբանկը» տարածաշրջանի առաջատար բանկերից է, որն առաջարկում է մանրածախ ու կորպորատիվ բանկային ծառայություններ՝ ուղղված յուրաքանչյուր անհատի եւ բիզնեսի ֆինանսական կարիքներին ու հետաքրքրություններին: Այս տարիների ընթացքում բանկը մշակել է նորարարական թվային լուծումներ եւ պրոդուկտներ՝ ներդնելով ֆինանսական ծառայությունների բոլորովին նոր մշակույթ Հայաստանում:

«Ինեկոբանկն» ունի թղթակցային հարաբերություններ աշխարհի մի շարք առաջատար միջազգային բանկերի հետ:

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ Գ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻՆ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը միացել է Newmag-ի BOOK DONATION կրթական եւ բարեգործական նախաձեռնությանը, որի նպատակն է համալրել Հայաստանի մարզերում համայնքային գրադարանների գրքային ֆոնդը: Նախագիծը նպաստում է ընթերցանության մշակույթի զարգացմանը եւ ընդլայնում է հեռավոր բնակավայրերի բնակիչների կրթական հնարավորությունները:

Ծրագրի շրջանակում յուրաքանչյուր գրադարան ստանում է Newmag հրատարակչությունից 500 նոր գիրք հայերեն լեզվով, որոնք նախատեսված են տարբեր տարիքային խմբերի եւ նախասիրությունների համար՝ գեղարվեստական եւ դասական գրականությունից մինչեւ մանկական, զարգացնող եւ մասնագիտական: Արդյունքում՝ տասնյակ գրադարաններ ողջ Հայաստանում կթարմացնեն իրենց գրքային ֆոնդերը եւ զարգացման նոր խթան կունենան:

Նախաձեռնության առաջին փուլում «ՎՏԲ-Հայաստան» բանկն աջակցել է Գյումրու եւ Գորիսի գրադարաններին: Հատկապես խորհրդանշական էր բանկի մասնակցությունը Գորիսում կայացած միջոցառմանը, որտեղ օգոստոսի 15-ին՝ քաղաքի օրվա առթիվ, «ՎՏԲ-Հայաստան» բանկի աջակցությամբ գրադարանը ստացավ արժեքավոր նվեր՝ տարբեր ժանրերի 500 նոր գիրք Newmag հրատարակչության կողմից: Տոնական մթնոլորտում անցկացված նվիրատվության արարողությունը դարձավ հանդիսության մի մասը եւ ընդգծեց մարզերում մշակույթի եւ կրթության զարգացման կարեւորությունը:

«Կրթության, մշակույթի եւ ինքնազարգացման աջակցությունը «ՎՏԲ-Հայաստան» բանկի առաքելության կարեւոր մասն է: Մենք համոզված ենք, որ հասանելիությունը որակյալ գրականությանը խթան կհանդիսանա ընթերցանության, կրթության եւ ինտելեկտուալ աճի համար, հատկապես՝ երիտասարդ սերնդի շրջանում», - նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի Գլխավոր տնօրեն - Տնօրինության նախագահ Արա Ավագյանը:

«BOOK DONATION-ը պարզապես գրքերի նվիրատվություն չէ: Դա միանվագ ակցիա չէ, այլ երկարաժամկետ նախաձեռնություն, որի նպատակն է մարզեր վերադարձնել ընթերցանության մշակույթը, ընդլայնել հասանելիությունը գրականությանը եւ գրադարանները դարձնել ժամանակակից կրթական կենտրոններ: «ՎՏԲ-Հայաստան» բանկի աջակցությունը հնարավորություն է տալիս ընդլայնել ծրագրի ծավալները եւ մեծացնել դրա ազդեցությունը տեղական համայնքների զարգացման վրա», - նշել է Newmag հրատարակչության տնօրեն Արտակ Ալեքսանյանը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐԴԻ ԱՐՎԵՍՏ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՖԻԼՄԵՐ

ՖՐԵՍԿՈ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ եւ «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ մինչեւ սեպտեմբերի 6-ը (փառատոնը սկսվել է օգոստոսի 18-ից) Լոռու, Կոտայքի մարզերում եւ Երեւանում կանցկացվի «Ֆրեսկո» արդի արվեստի եւ հոգեւոր ֆիլմերի միջազգային ներառական 12-րդ փառատոնը:

Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: Փառատոնի մեկնարկին ընդառաջ Լոռու մարզում կկազմակերպվի ներառական մշակութային ճամբար՝ուղղված խոցելի խմբերի երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտմանը եւ մշակութային ինտեգրմանը: Բացման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա օգոստոսի 22-ին Կոտայքի մարզի Աբովյան համայնքում: Կմասնակցեն դաշնակահար Լեւոն Կարապետյանը, Հայաստանի Թ. Ալթունյանի անվան երգի-պարի պետական համույթը, «Զալյան Վոյս ստուդիան» եւ Ժեստերի երգչախումբը: Այս տարի փառատոնի ծրագրում ընդգրկված են 35 երկրից ներկայացված 52 միջազգային ֆիլմ, համերգային ծրագրեր, թատերական ներկայացումներ եւ վարպետության դասեր:

«Ֆրեսկո»-ն մշակութային երկխոսության յուրօրինակ հարթակ է, որը Հայաստանը վերածում է ժամանակակից շփումների խաչմերուկի: Այն համադրում է մշակութային, հոգեւոր եւ սոցիալական արժեքներ, միավորում է արդի արվեստի տարբեր ձեւեր եւ հոգեւոր թեմատիկ ֆիլմեր՝ ընդգծելով արվեստի դերը մարդու ներաշխարհի բացահայտման, սոցիալական արդարության, ներառականության եւ միջմշակութային երկխոսության խթանման գործում: Փառատոնը հատուկ ուշադրություն է դարձնում խոցելի խմբերի ստեղծագործական ներուժի զարգացմանը, կարծրատիպերի հաղթահարմանը եւ համատեղ նախաձեռնությունների խրախուսմանը՝ հիմնվելով ինտեգրման սկզբունքի վրա: Բոլոր միջոցառումների մուտքն ազատ է:

Օգոստոսի 18-20-ը Լոռու մարզի Ներառական մշակութային ճամբարում տեղի է ունենալու միջոցառման բացման հանդիսավոր արարողությունը:

«Ֆրեսկո» արդի արվեստի եւ հոգեւոր ֆիլմերի միջազգային ներառական 12-րդ փառատոնի ծրագիրը հետեւյալն է՝

Օգոստոսի 22 - Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ

20:30 համերգային ծրագիր - Թաթուլ Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական վաստակավոր անսամբլ,

- Զալիան Վոյս ստուդիո եւ Ժեստերի երգչախումբ,

- Դաշնակահար՝ Լեւոն Կարապետյան

21:30՝ ֆիլմերի դիտում - «Անկայունության Երգը» (Թայվան), «Թաիֆ» (Իրաք):

Օգոստոսի 23 - Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ

20:30 համերգային ծրագիր - Ազգային նվագարանների պետական նվագախումբ

21:30-ին՝ Ֆիլմերի դիտում - «Գծագրելու Ժամանակը» (Իսպանիա), «Կանաչ Խխունջների Մայրամուտը» (Իրան), «Սիլվենը Թեղուտից» (Հայաստան), «Վերայի Երազանքները Սուշիի Մասին» (Ռուսաստան), «Ժպիտներ եւ Շաքար» (Հոնգ Կոնգ):

Օգոստոսի 24 - Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ

20:30 համերգային ծրագիր - Սարգիս Մանուկյան եւ ընկերներ

21:30 Ֆիլմերի դիտում - «Կոնտակտ» (Ռուսաստան), «Գիշերային Հերթափոխ» (Ֆրանսիա), «Բարեւ» (Հայաստան), «Մեծահասակները» (Ռուսաստան), «Բեուլա» (Հնդկաստան)

Օգոստոսի 27 - Երեւան, Փոքր Թատրոն, Աբովյան 11

14:00 ֆիլմերի դիտում - «Հորիզոնից մի փոքր հեռու» (Ռուսաստան), «Պարզ բաներ», (Ռուսաստան), «Վերջին Անգամ» (ԱՄՆ), «Անցանկալի անդամ» (Հնդկաստան), «Աֆոյո Կարլո» (Իտալիա), «Նինա» (Իտալիա), «Մայրիկ» (Լեհաստան), «Կարանտինային փրկագին» (Իրան), «Կուչոմոզա» (Չադ), «Դիմանկար» (Ռուսաստան), «Առանց ընտանիքի» (Ռուսաստան), «Ուղիղ եւ Շրջանագծով» (Բելառուս), «Ամբողջական հիշողություն» (Լյուքսեմբուրգ), «Գեղեցիկ Ժպիտ» (Գերմանիա), «Մանկական ալբոմ» (Ռուսաստան), «Հաղթողը» (Իրան), «Մեկ տեսանելի» (Ֆրանսիա), «Նովավիտա» (Իտալիա), «Անհնարինին ընդդեմ» (Մեքսիկա), «Նանուկ Սարի Լեգենդը» (Իրան), «Կետ» (Իրան), «Մայրեր եւ երեխաներ» (Ռուսաստան):

Օգոստոսի 28 - Երեւան, Փոքր Թատրոն, Աբովյան 11

14:00 ֆիլմերի դիտում - «Ամառվա վերջի պոեմը» (Չինաստան, Շվեյցարիա), «Յու» (Ռուսաստան), «Դեպի Ո՞ւր» (Եգիպտոս), «Քուինն» (Բրազիլիա), «Վրա» (Հոնգ Կոնգ), «Անիծված ձվերը» (Ալժիր), «Թակոց» (Վրաստան, Ռուսաստան), «Երբ Ես Եկա Քո Դռան Մոտ» (Եթովպիա), «Լույսեր» (Չեխիա), «Երեք ոտքի պարը» (Գերմանիա), «Կարերի տակ» (Արգենտինա), «Վարդերի փողոց» (Իտալիա), «Բլանշետը եւ ութ կոպեկը» (Ֆրանսիա), «Սեւ ու սպիտակ» (Հայաստան, Ռուսաստան):

19:00-ին՝ թատերական ներկայացում - «Վայրի երեխան» (Գյումրու երիտասարդական թատերախումբ):

Օգոստոսի 30 - Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Շառլ Ազնավուրի անվան զբոսայգի՝ Եղեւնիների պուրակ

20:30 համերգային ծրագիր - «Արդվին» երգի-պարի անսամբլ

21:30-ին՝ Ֆիլմերի դիտում - «Հայոց Հոգու եւ Մարմնի Համաձայլը» (Հայաստան):

Սեպտեմբերի 5 - Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Շառլ Ազնավուրի անվան զբոսայգի՝ Եղեւնիների պուրակ

20:30-ին՝ թատերական ներկայացում - «Ցանկապատ» (ԲՈՀԵՄ թատրոն):

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓՎԵԼ Է «ՍԵՎԱՆԱՅԱՆՑ» ԾՐԱԳԻՐԸ

ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ եւ «Սեւան» երիտասարդական ակումբ» ՀԿ-ի նախաձեռնությամբ իրականացվել է «ՍեւանաՅԱՆՑ» ծրագիրը:

Ինչպես տեղեկացնում է ՀՀ ԿԳՄՍՆ-ն, ծրագրի նպատակն էր Գեղարքունիքի մարզի համայնքներում երիտասարդության շրջանում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության գաղափարի տարածումը, մշակութային եւ բնապահպանական կրթության խթանումը:

Ծրագրին մասնակցության հայտ էին ներկայացրել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի, Վարդենիս, Ճամբարակ եւ Սեւան խոշորացված համայնքների 15 բնակավայրի 40 երիտասարդներ: Արդյունքում խոշորացված համայնքների 10 բնակավայրից (Սեւան, Լճաշեն, Լիճք, Վարդենիկ, Ճամբարակ, Ծովակ, Կուտական, Գավառ, Գանձակ, Սարուխան) ընտրվել է 16 մասնակից, որոնք ներգրավվել են բազմաբնույթ մշակութային միջոցառումներում:

Ծրագիրը հագեցած էր տեսական եւ գործնական կրթական նյութերով, այդ թվում՝ տեսական ինտերակտիվ դասընթաց ոչ նյութական մշակութաին ժառանգության պահպանության, գույքագրման եւ հանրայնացման մասին թեմաներով՝ դրանք համադրելով Սեւանա լճի կարեւորության, հիմնախնդիրների, լճին առնչվող մշակութային ժառանգության եւ կլիմայի փոփոխության պարագայում դրանց պահպանության եւ փոխակերպումների հարցերի հետ: Ծրագրի գործնական հատվածում տեղի են ունեցել նյութի հավաքագրման հանդիպումներ տեղաբնակ բանասացների հետ, նյութի գրանցման մեթոդաբանության ուսուցում, դասընթացավարների ու փորձագետի հետ համատեղ դաշտային հետազոտական աշխատանքների իրականացում, ինչպես նաեւ այցելություն Սեւան ազգային պարկի թանգարան՝ծանոթանալու լճի հարակից բնական եւ մշակութային ժառանգությանը:

Ծրագրի շրջանակում Սեւան համայնքում տեղի է ունեցել «ՍեւանաՅԱՆՑ» երիտասարդական կրթական մշակութային եռօրյա ճամբարը, որի ընթացքում մասնակիցները գործնականում կիրառել են ստացած գիտելիքները: Նրանք համայնքներում բանասացներից գրանցել են ոչ նյութական մշակութային ժառանգության 41 տարր, որոնցից հինգը կներկայացվեն ՀՀ ոչ նյութական մշակութային ժառանգության պետական ցանկերում գրանցման:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ՝ ՀՀ–ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ ԽԱՂԻ ՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջին օրերին ֆուտբոլասերների շրջանում տարածված էր կարծիք, որ Հայաստանի ամենաթանկ արժույթը ոչ թե դոլարն է, այլ Պորտուգալիայի դեմ խաղի տոմսը: Իրոք, ստորություն է երեխաների համար այդքան սպասված հանդիպման տոմս գնելն ու այն կրկնակի թանկ վերավաճառելը:

Տոմսերի վաճառքի առիթով Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան հանդես է եկել հայտարարությամբ:

«Հարգելի՛ երկրպագուներ,

Հայաստան-Պորտուգալիա հանդիպման տոմսերի վաճառքը մեծ արձագանք ստացավ: Շատերը ՀՖՖ-ին մեղադրում են, որ չեն կարողացել տոմս գնել: «Հանրապետական» մարզադաշտը կարող է ընդունել առավելագույնը 14.000 երկրպագու: Տոմս ձեռք բերելու հայտ է ներկայացրել 470.000 մարդ: 1 երկրպագուն կարող էր գնել 2 տոմսից ոչ ավելի, հետեւաբար, հնարավոր է եղել բավարարել մոտ 7000 հայտի պահանջ: Բնականաբար, շուրջ 463.000 երկրպագու կարող է բողոքել, որ չի կարողացել տոմս գնել:

Տոմսերի պաշտոնական վաճառքից դեռ ամիսներ առաջ համացանցում եղել են վաճառքի վերաբերյալ ՈՉ պաշտոնական հայտարարություններ, հիմա էլ ոմանք աստղաբաշխական գներով տոմսեր են վաճառում:

Վերավաճառողների դեմ պայքարելու համար ՀՖՖ-ին խորհուրդ էին տալիս հանդիպման տոմսերը վաճառել 100.000-200.000 դրամ, բայց ՀՖՖ ռազմավարության հիմնական ուղղություններից է ֆուտբոլը որպես սոցիալական երեւույթ ընկալելը: Բնականաբար, տոմսերի նման թանկացում չէր կարող լինել:

Տեղեկացնենք, որ 14.000 նստատեղով ստադիոնի մոտ 7.000 տոմս վաճառվել է շատ մատչելի՝ 1000-3000 դրամ: Շուկայում այժմ այս տոմսերը վաճառում են տասնապատիկ թանկ:

ՀՖՖ-ի վաճառած բոլոր տոմսերի QR կոդերը ակտիվանալու են հանդիպման օրը՝ սեպտեմբերի 6-ին: Վերավաճառողները տոմսերը կարող են վաճառել մի քանի անձի, բայց ակտիվանալու է միայն մեկ QR կոդ: Այս դեպքում եւս կարող է լինել բողոքի մեծ ալիք, որի հետ ՀՖՖ-ն որեւէ առնչություն չունի:

Հարգելի՛ ֆուտբոլասերներ, ՀՖՖ-ն հորդորում է շուկայից չգնել տոմս՝ հետագա բարդություններից խուսափելու համար: ՀՖՖ-ն պատասխանատու չէ այլ անձանց վաճառած տոմսի համար: Վերավաճառողից տոմս չգնելով՝ կօգնենք, որպեսզի հետագայում հայկական ֆուտբոլից իսպառ վերանա այս բացասական երեւույթը»:

Այսպիսով, «Հանրապետական» մարզադաշտը կարող է ընդունել միայն 14.000 երկրպագու, մինչդեռ տոմս ձեռք բերելու հայտ է ներկայացրել շուրջ 470.000 մարդ: Այսպիսով՝ ավելի քան 463.000 երկրպագու չի կարողացել տոմս ստանալ:

Թե ինչպես վաճառվեցին այդ տոմսերը ֆանտաստիկ արագությամբ՝ ծանր աշխատող կայքում, միայն Աստված գիտի: Իսկ թե ովքեր դարձան այն երջանիկները, որոնք գնեցին դրանք, նույնպես գիտեն միայն «վերեւները»:

● *Օգոստոսի 30-ին՝ժամը 15:00-ին, Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում տեղի կունենա «Մադագասկար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.500-3.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ եթե անձը կենսաթոշակ ստանալու համար դիմում է ներկայացնում, ապա ինչ ժամկետում է այն նշանակվում:

Քրիստինե Լալայան
(37 տարեկան, տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ք. Լալայանի հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը՝

նշանակել կենսաթոշակ,

նշանակել կենսաթոշակ եւ տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին,

մերժել կենսաթոշակ նշանակելը:

Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի եւ կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է: Կենսաթոշակի աշխատանքային մասը աշխատանքային ստաժի տարիների, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի եւ կենսաթոշակառուի անձնական գործակցի արտադրյալն է:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ են եկեղեցիների շենքերը շքեղ, այլ ոչ թե հասարակ ու համեստ: Ո՞րն է դրա իմաստը:

Ժենյա Հակոբյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սխալ է ասել, թե եկեղեցին շքեղ է, այն պատշաճորեն գեղեցիկ եւ մաքուր է, քանի որ աներեւույթ Աստծո բնակարանն է: Ս. Հովհաննես առաքյալն ասում է. «Աստծո Որդու Արյունը սրբում է մեզ ամեն մեղքից...եթե մեկը մեղանչի, Աստծո առաջ բարեխոս ունենք Հիսուս Քրիստոսին՝ Արդարին եւ Անարատին, եւ Նա է քավությունը մեր մեղքերի»: Եկեղեցում՝ Սուրբ Պատարագի ժամանակ ենք հաղորդվում մեր Աստծո՝Տեր Հիսուս Քրիստոսի հետ: Աստված Սուրբ է եւ սուրբերի մեջ է բնակվում (տես՝ Բ Կորնթ. 6.14-7.1), ուստի այն տեղը, որտեղ տեղի է ունենում մեր հանդիպումը՝ Սուրբ, Անմեղ, Արդար եւ Անարատ Տեր Հիսուս Քրիստոսի հետ հաղորդությամբ, պետք է լինի պատշաճորեն գեղեցիկ եւ մաքուր:

Օրհնությանք՝Տ. Սմբատ քահանա Սարգսյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայ Եկեղեցու առաջին հիմնադիրներն են Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալները, որոնք կոչվում են Հայաստանի Առաջին Լուսավորիչներ: Նրանց շիրիմները որպես նվիրական սրբավայրեր հարգվել ու պահպանվել են պատմական Հայաստանի Արտազի (Մակու) եւ Աղբակի (Պաշքալե) վանքերում: Բոլոր քրիստոնյա եկեղեցիները համամիտ են Սուրբ Բարդուղիմեոս առաքյալի մասին եղած հայոց ավանդությանը եւ անվարան ընդունում են թե՛ նրա առաքելական շրջանը եւ թե՛ Հայաստանում քարոզելն ու այնտեղ մարտիրոսված լինելը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Կիլիկիա ավտոկայանի տարածքում սյունն ու մայթը դարձել են աղբաման. երեւի շատ մարդիկ մոռացել են, որ քաղաքը մեր բոլորինն է, ու մաքուր պահելը մեր պարտականությունն է առաջնահերթ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+10 + 15 +27 + 32
Կոտայքի լեռներ	+10 + 14 +28 + 31
Կոտայքի նախալեռներ	+18 + 21 +31 + 34
Գեղարքունիք	+ 9 + 14 +25 + 29
Լոռի	+12 + 16 +25 + 29
Տավուշ	+19 + 22 +30 + 34
Արագածոտնի լեռներ	+10 + 15 +27 + 30
Արագածոտնի նախալեռներ	+18 + 22 +30+ 35

Արարատ	+18 + 21 +33 + 36
Արմավիր	+19 + 22 +36 + 38
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 13 +25 + 29
Վայոց ձորի նախալեռներ	+19 + 23 +35+ 38
Սյունիքի հովիտներ	+18+ 22 +30 + 35
Սյունիքի նախալեռներ	+15 + 18 +24 + 28
ԼՂՀ	+15+ 19 +30 + 35
Երեւան	+22 + 29 +31 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.8.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*